ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԿՓԲԸ-ՄԱԱՊՁԲ-18/16

«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐԱՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ (ԱՊՐԱՆՔԻ) ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ք. Երևան «04» Դեկտեմբեր 2018թ.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն ի դեմս գլխավոր տնօրեն Մ.Ջալալյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Տ.Ղարիբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.6.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.7 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **644 075 (վեց հարյուր քառասունչորս հազար յոթանասուն հինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.6 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.7 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 հավելվածը, համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

8.8 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Հաշվարկային կենտրոն>>ՓԲԸ	«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 27	ք.Երևան, Վարդանանց 110
<<Կոնվերս բանկ>> ՓԲԸ	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1930000600150100	Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01544167	ՀՎՀՀ 01548908
Ս. Զաքարյան ----------	Տ. Ղարիբյան ----------
Կ.Տ	(ստորագրություն)
	Կ.Տ

Հավելված N 1

«_04_» _05_ 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ապրանքի						
	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	Ընդհանուր գին (ՀՀ դրամ)	մատակարարման վայրը	մատակարարման ժամկետը
1.	Գնդիկավոր գրիչ	Cello Butterflow կամ համարժեք	հատ	50	10 500	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
2.	Գելային գրիչ	EXTRA 0,7 կամ համարժեք	հատ	50	17 500	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
3.	Գելային գրիչ	բարձր որակի	հատ	10	5 100	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
4.	Մատիտ	գրաֆիտե տեղադրվող միջուկով, մեխանիկական 0,5	հատ	15	4 500	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
5.	Մատիտ	գրաֆիտե տեղադրվող միջուկով, մեխանիկական 0,7	հատ	15	4 500	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
6.	Մատիտ	գրաֆիտե միջուկով հասարակ	հատ	8	560	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
7.	Գծանշիչ (մարկեր)	թղթի	հատ	10	1 700	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
8.	Գծանշիչ (մարկեր)	գրատախտակի համար	հատ	5	700	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.

9.	Սեղանի հաշվիչ	12 նիշանի	հատ	1	6 000	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
10.	Ռետին	հասարակ	հատ	15	1 125	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայ u 2018թ.
11.	Թանաք	կն ջի բարձիկի հա	հատ	4	800	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայ u 2018թ.
12.	Լրացուցիչ գրաֆիտ	մե անիկական մատիտների հա ար 0,5M	հատ	10	600	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայ u 2018թ.
13.	Լրացուցիչ գրաֆիտ	մեխանիկական մատիտների համար 0,7M	հատ	20	1 200	ք. ևան Աբովյան 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
14.	Տուփեր մատիտների տեղադրման համար	օրգանայզեր	հատ	3	4 500	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
15.	Շտրիխներ	մատիտ	հատ	7	1 470	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
16.	Շտրիխներ	հասարակ	հատ	10	2 000	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
17.	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն գրասենյակային փոքր	սկոչ փոքր	հատ	10	300	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
18.	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն գրասենյակային փոքր	սկոչ մեծ	հատ	15	3 600	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
19.	Սոսինձ թղթի, ստվարաթղթի	սոսնձամատիտ	հատ	10	2 100	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
20.	Մատիտի սրիչ	սովորական	հատ	6	720	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.

21.	Էջանիշ	գունավոր	հատ	4	1 360	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
22.	Գրասենյակային սեղանի հավաքածու	Փայտե հավաքածու նախատեսված ղեկավարի համար, ներառում է թղթադարակ, գրչաման, 2 գրիչի տակդիր, սեղանին դրվող կաշվե գորգ	հատ	2	110 000	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
23.	Փաստաթղթերի համար նախատեսված սեղանի վրա դրվող դարակաշար	ուղղահայաց, երկաթյա ցանցով, երկդարականի	հատ	2	7 400	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
24.	Մագնիսական գրատախտակի ջնջիչ	Նախատեսված մարկերային գրատախտակի համար,մկնիկի տեսքով	հատ	7	5 880	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
25.	Կարիչի մետաղալարե կապեր	ստեպլերի միջուկ N10	հատ	15	1 125	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
26.	Կարիչի մետաղալարե կապեր	ստեպլերի միջուկ N24/6	հատ	15	2 250	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
27.	Կոճգամ գունավոր մետաղական	Փոքր, տուփում 100 հատ	հատ	4	560	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
28.	Կոճգամ գունավոր մետաղական	մեծ	հատ	1	275	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
29.	Թղթապանակ ֆայլով	40 էջանոց	հատ	10	3 700	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
30.	Թղթապանակ ֆայլով	60 էջանոց	հատ	10	3 200	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
31.	Թղթապանակ արագակար	Ստվարաթղթից 230գր	հատ	30	4 500	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.

32.	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	Նաղատեսված A4 ֆորմատի համար	հատ	2000	20 000	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
33.	Թղթապանակ կոշտ կազմով	RADO կամ համարժեք (5x31)	հատ	40	27 200	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
34.	Թղթապանակ կաշվե կազմով	Նախատեսված A4 ֆորմատի համար մետաղական անկյուններով	հատ	5	20 000	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
35.	Կարիչներ N10	Նախատեսված մինչև 20 թերթ կարելու համար	հատ	7	3 220	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
36.	Կարիչներ N24/6	Նախատեսված 24/6 ասեղով կարելու համար, մինչև 30 թերթ	հատ	7	3 850	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
37.	Դակիչ (ծակոտիչ)	միջին	հատ	3	4 650	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
38.	Թուղթ A4 ֆորմատի	21x29,7	հատ	115	253 000	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
39.	Շնորհավորական բացիկներ	Առանց տպագրության, տոնական նկարով, տեսքը և չափը համաձայնեցնել պատվիրատուի հետ	հատ	50	47 500	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
40.	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով	դեղին գույնի 76x76 տուփում 100թ	հատ	20	3 800	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
41.	Թուղթ նշումների համար գունավոր, սոսնձվածքով	տարբեր գույների 76x102	հատ	10	3 750	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
42.	Թուղթ նշումների համար չորս գույնանի, սոսնձվածքով	չորս գույնանի 76x76	հատ	6	2 100	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
43.	Թուղթ նշումների համար	Պլաստմասե տուփով, 1000 թերթ	հատ	2	2 500	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.

44.	Թուղթ նշումների համար, տրցակներով	սպտակ գույնի, տուփում 100 թերթ	հատ	20	1 500	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
45.	Նշումների տետր	4QR 10*8-EX40896(30*20)	հատ	4	3 400	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
46.	Օրատետր	Կաշվե կազմով առօրյա նշումների համար	հատ	2	2 000	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
47.	Նոթատետր (փոքր Paperlin)	փոքր Paperline կամ համարժեք	հատ	8	5 360	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
48.	Նոթատետր միջին (Note Book)	A4 2QR	հատ	8	8 800	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
49.	Նոթատետր	A4 պոկվող էջերով	հատ	7	2 100	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
50.	Նոթատետր	A5 պոկվող էջերով	հատ	20	4 000	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
51.	Գրասենյակային գիրք	մեծ Paperline կամ համարժեք (տողանի)	հատ	4	10 000	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
52.	Գրասենյակային գիրք	փոքր Paperline կամ համարժեք (տողանի)	հատ	1	900	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.

53.	Գրասենյակային գիրք	միջին Paperline կամ համարժեք (տողանի)	հատ	2	4 000	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
54.	Տետր	48 էջ, (տողանի)	հատ	2	720	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	Մայիս 2018թ.
Ընդամենը					**644 075**	ք. Երևան Աբովյան 27 3-րդ հարկ	**Մայիս 2018թ.**

ԳՆՈՐԴ

<<Հաշվարկային կենտրոն>>ՓԲԸ
ք. Երևան, Աբովյան 27
<<Կոնվերս բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 19300006001501 00
ՀՎՀՀ 01544167
Մ. Չալպայան ----------
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908
Տ. Ղարիբյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ